

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի 24.08.2015 թ. նիստի

Մասնակցությամբ՝

- ՀՀ Արմավիրի մարզպետ՝ Ա. Ղահրամանյանի
- ՀՀ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ա. Ղուկասյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության վարչության պետ՝ Վ. Մկրտչյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ Հ. Հարությունյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ՝ Ա. Պողոսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Ա. Այվազյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության գյուղատնտեսության բաժնի

գետ՝

Մ.Սարիբեկյանի

Գյուղատնտեսության աջակցության

Արմավիրի մարզային կենտրոնի տնօրեն՝

Լ.Ալեքսանյանի

ՀՀ Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած համայնքների ղեկավարների

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2015 թվականի օգոստոսի 22-ի տրամադրության կարկտահարությունից տուժած ՀՀ Արմավիրի մարզի մի շարք համայնքներում սպեղծված իրավիճակի մասին

/ Ա. Ղահրամանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ /

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը օրակարգային հարցի առնչությամբ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նիստի մասնակիցներին տեղեկացրեց, որ օգոստոսի 22-ի երեկոյան մոտ մեկ ժամ տեղացած կարկուտը քամու ուղեկցությամբ հողին հավասարեցրեց գյուղացիների բոլոր ակնկալիքները:

Կարկուտից ամենաշատը տուժել են ձմերուկի ցանքատարածությունները: Շենիկցիների խոսքով՝ մի քանի օրից սկսելու էին բերքահավաքը, սակայն կարկուտը 100 տոկոսով վնասեց բերքը:

Կարկուտից մասամբ փրկվել են լուխկի ցանքատարածությունները: Գյուղացիների կարծիքով, 10-ից 20 տոկոս կարելի է գործարանային բերք հավաքել: Շենիկում 1000 հեկտար մշակովի հողատարածք կա: Կարկուտից ամբողջովին վնասվել է մոտ 700 հեկտարը, վնասվել են ոչ միայն ցանքատարածություններն ու այգիները, այլ նաև բնակելի տներ, փանիքներ:

Գյուղացիական տնտեսությունների մոտ 80 տոկոսը վարկառուներ են, ովքեր գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման նպատակով մինչև 25 մլն դրամ վարկ են ստացել: Գյուղացիները ակնկալում են կառավարության աջակցությունը վարկերը երկարաձգելու կամ սառեցնելու ուղղությամբ: Կարկուտից մասամբ տուժել են նաև Բաղրամյանի փարածաշրջանի Բագարան, Կողբավան, Բաղրամյան և Դալարիկ համայնքները:

« Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը ակնկալեց, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում համապատասխան ընթացակարգով և սեղմ ժամկետում կավարտվեն մարզի համայնքներում կարկտահարության հետևանքով մարզի գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման աշխատանքները և համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը մարզային հանձնաժողովում քննարկելուց հետո համաձայնեցված ակտերը կներկայացվեն հանրապետական հանձնաժողով:

Հանձնաժողովը որոշում է՝

1. Առաջարկել կարկտահարությունից տուժած համայնքների ղեկավարներին՝

ա/ թարմացնել « Արմավիրի մարզպետի 17.02.2012 թ. N 60 որոշման 3-րդ կետի պահանջով համայնքներում ստեղծված արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պարճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովների կազմերը՝ համայնքներում կարկտահարության պարճառով գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման աշխատանքները կատարելու գործընթացը սկսելու նպատակով,


բ/ համայնքային հանձնաժողովների ակտերը կազմել և մարզային հանձնաժողով ներկայացնել համապատասխան նախարարությունների, ինչպես նաև « Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության կողմից մշակվող և տրամադրվելիք ակտերի ու տեղեկագրվական նյութերի ձևաչափերին համապատասխան:

Հանձնաժողովի նախագահ՝



Մ. Քաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝



Դ. Դավթյան